

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 55/09

Քաղ. Երևան

28 ապրիլի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. ապրիլի 28-ի նիստում (արձանագրություն № 69/2) քննարկեց MARS, INCORPORATED (US) ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար, Է.Նահապետյանի ներկայացված 2009թ. մարտի 23-ի բողոքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն)՝ «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» բառային ապրանքային նշանի (հայտի № 20080327) գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 09.01.2009թ. որոշման դեմ:

2009թ. հունվարի 9-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում նաև՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ տեքստում նաև՝ կարգ) 15-րդ կետի 1-ին 93-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն մերժել է MARS, INCORPORATED (US) ընկերության «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» (հայտի № 20080327) ապրանքային նշանի գրանցումը՝ նույնատիպ ապրանքների համար «Գրանդ Քենդի» հայ կանադական ՀԶ ՍՊԸ-ի անունով արդեն գրանցված «ЖЕМЧУЖИНА» (գր.№9085) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով:

Սակայն բողոքարկողը համաձայն չէ այդ որոշման հետ, քանի որ համարում է, որ մերժված «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» (հայտ №20080327) և հակադրված «ЖЕМЧУЖИНА» (գր.№9085) բառային ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն, ուստի և դրանց ընկալումը սպառողի կողմից սկզբունքորեն տարբերվում է: Իր պնդումը հիմնավորելու համար բողոքարկողը համեմատում է մերժված և հակադրված ապրանքային նշանները հնչյունային, գրաֆիկական և իմաստային նմանության տեսակետից՝ հաստատելու համար նշանների շփոթություն աստիճան նման չլինելու փաստը:

Բողոքարկողը նշում է, որ հակադրված նշանն իրենից ներկայացնում է կրիլիցայի մեծատառերով գրված մեկ բառից բաղկացած «ЖЕМЧУЖИНА» բառային ապրանքային նշան, ընդ որում, այդ բառը բաղկացած է չորս վանկից և արտասանվում է «ժիմչուժինա»: Ի

տարբերություն այդ նշանի, մերժված նշանն իրենից ներկայացնում է երկու՝ «ШОКОЛАДНЫЕ» և «ЖЕМЧУЖИНЫ» բառերից բաղկացած արտահայտություն, որը, շնորհիվ «ШОКОЛАДНЫЕ» ածականի, ստանում է բոլորովին այլ՝ «շակալաղնիե ժիմջուժիկ» արտասանություն: Ընդ որում, բառերը, լրացնելով միմյանց, ստեղծում են մի ինքնատիպ բառակապակցություն, որտեղ յուրաքանչյուր տառ կամ հնչյուն իր ուրույն դիրքն է զբաղեցնում՝ համապատասխան շեշտադրություն կրելով, սակայն հիմնական դերն է ստանձնում «ШОКОЛАДНЫЕ» բառը:

Ինչ վերաբերում է նշանների գրաֆիկական տարբերությանը, ապա չնայած երկու նշաններն էլ կատարված են կրիլիցայի ստանդարտ տառաշարով, սակայն ակնհայտ է դրանց կառուցվածքային տարբերությունը: Մերժված «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» ապրանքային նշանի մեջ առաջնային դիրք զբաղեցնող «ШОКОЛАДНЫЕ» բառն իր վրա է վերցնում նշանի առաջնային ընկալումը՝ թուլացնելով «ЖЕМЧУЖИНЫ» բառի ընկալումը: Բողոքարկողի կարծիքով, տվյալ փաստը նույնպես սպառողին զերծ կպահի շփոթությունից, քանի որ նա անկասկած կտարբերի բառը արտահայտությունից:

Նշանների իմաստային տարբերության առումով բողոքարկողը նշում է, որ հակադրված «ЖЕМЧУЖИНА» նշանի իմաստը ընդհանուր է՝ մարգարիտ: Լրիվ մեկ այլ իմաստային երանգով է օժտված մերժված նշանը, որն երկու բառերից բաղկացած արտահայտություն է և թարգմանաբար նշանակում է «շոկոլադե մարգարիտներ», ինչը յուրօրինակ իմաստային երանգ է հաղորդում նշանին և բավական տպավորիչ է սպառողի համար: Սա էլ վառ ապացույց է նշանների իմաստային տարբերության:

Բերված մանրամասն վերլուծությունից բողոքարկողը եզրակացնում է, որ նշաններն կատարված են միանգամայն տարբեր ոճերով, օժտված են իրենց յուրահատուկ տարբերակիչ հատկությամբ և ունեն տարբեր տեսողական, հնչյունային և իմաստային ընկալում՝ բացառելով սպառողի կողմից դրանց շփոթելու հնարավորությունը:

Բողոքարկողը կարևորում է նաև այն հանգամանքը, որ թե՛ MARS, INCORPORATED (US) ընկերությունը և թե՛ «Գրանդ Քենդի» ընկերությունը քաջ հայտնի են հայ սպառողին իրենց բարձրորակ արտադրանքով, որոնց շփոթելը պարզապես անհնար է նաև այն պատճառով, որ յուրաքանչյուր ապրանքի փաթեթի վրա անպայմանորեն գետեղված է արտադրող ընկերության անվանումը, ընդ որում, «Գրանդ Քենդի» ընկերության լոգոտիպը զբաղեցնում է բավական ակնառու դիրք ցանկացած տիպի փաթեթի վրա: Յենց այս հանգամանքներն էլ թույլ չեն տա որևէ շփոթություն սպառողի կողմից, որի շնորհիվ այդ երկու ընկերությունների արտադրանքը անխնդիր համագոյատևում է հայկական շուկայում:

Բողոքարկողը հարկ է համարում նաև նշել այն կարևոր փաստը, որ գրանցում է ստացել MARS, INCORPORATED (US) հայտատուի CHOCOLATE PEARLS նշանը (գր.դ.13559), որը հանդիսանում է մերժված արտահայտության անգլերեն տարբերակը, հետևաբար, նրա կարծիքով, դ.20080327 հայտով «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» նշանն էլ կարող է գրանցվել ՀՀ տարածքում առանց շփոթության խնդիր առաջացնելու:

Այսպիսով, բերելով իր փաստարկները, բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել թիվ 20080327 հայտով «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ»

ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարարված դասի բոլոր ապրանքների նկատմամբ:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» (հայտ դ20080327) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը կայացվել է օրենքի և կարգի պահանջներին համապատասխան, նկատի ունենալով, որ փորձաքննությունը առաջնորդվել է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասկետի ա) ենթակետով, որի համաձայն «որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան սման են նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին»: Տվյալ դեպքում՝ հայտարկված «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» (հայտ դ20080327) և հակադրված «ЖЕМЧУЖИНА» (գր.դ9085) բառային ապրանքային նշանները շփոթելու աստիճան սման են, ուստի հիմք ընդունելով այդ հանգամանքը, բողոքարկման խորհուրդը հիմքեր չի տեսնում փորձաքննության որոշումը վերանայելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքերի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, կարգի 15-րդ կետի 1-ին և 93-րդ կետի 1-ին ենթակետերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ, բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել MARS, INCORPORATED (US) ընկերության ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար, Է.Նահապետյանի կողմից ներկայացված 2009թ. մարտի 23-ի բողոքը և «ШОКОЛАДНЫЕ ЖЕМЧУЖИНЫ» բառային ապրանքային նշանի (հայտի No. 20080327) գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 2009թ. հունվարի 9-ի որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան